

Հովհ. Թումանյան

# ԱԽԹԱՄԱՐ



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1959

Ձևավորումը և նկարները արվեստի վաստակավոր գործիչ՝

ՄՀԵՐ ԱԲԵՂՅԱՆԻ

ОВ. ТУМАНЯН

АХТАМАР

(На армянском языке)

Армянское государственное издательство

(Айпетрат), Ереван, 1959



Ծիծաղախիտ Վանա ծովի
Փոքրիկ գյուղից առափնյա,
Ծովն է մտնում գաղտագողի
Ամեն գիշեր մի տղա:

Ծովն է մտնում առանց նավակ,
Բազուկներով առնացի

Ջուրը ճողփում, լող է տալի
Դեպի կըղզին դիմացի:

Խավար կըղզուց պա՛րզ ու պայծառ
Մի լույս կանչում է նրան,
Մի վառ փարոս նրա համար,
Զըմոլորի իր ճամփան:

Սիրուն Թամարն ամեն գիշեր
Այնտեղ կրակ է անում,
Եվ սպասում է անհամբեր
Այնտեղ՝ մոտիկ դարանում:

* * *

Ծըփում է ծովն ալեծածան,
Ծըփում է սիրտը տղի.

Գոռում է ծովն ահեղաձայն,
Նա կըռվում է կատաղի:

Եվ Թամարը սըրտատրոփ
Արդեն լըսում է մոտիկ
Ջըրի ճողփյուն, ու ողջ մարմնով
Սիրուց այրվում է սաստիկ:



Լըռեց: Ծովի խավար ափին
Կանգնեց սև-սև մի ըստվեր...
Ահա և նա... իրար գըտան...
Կասկածավո՞ր լուռ գիշեր...

Միայն ալիքը Վանա ծովի
Մեղմ դիպչում են ափերին,

Հըրհըրելով հեռանում են
Ճըճունչներով անմեկին:

Նըրանք ասես փըսփըսում են...
Ու աստղերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամոթ Թամարից...



Բամբասում են կուսի սըրտում...
Ժամ է արդեն... ու կըրկին
Մինն ալեկոծ ծովն է մըտնում,
Մյուսն աղոթում եզերքին...

* * *

«Ո՞վ է ջահել էն խիզախը,
Որ հենց հարբած իր սիրով,

Սըրտից հանած ահն ու վախը
Ծովն անցնում է գիշերով:

Ծովն անցնում է մյուս ափերից
Մեր Թամարին համբուրում...
Աղջի՞կ խըլի նա մեր ձեռի՜ց...
Ինչի՞ տեղ է մեզ դընում...»:



Էսպես ասին վիրավորված
Կըղզու միջի ջահելներ
Ու Թամարի ձեռքով վառած
Լույսը հանգցրին մի գիշեր։

Մոլորվեցավ խավար ծովում
Լուղորդ տըղան սիրահար,

Ու բերում է հողմը, բերո՜ւմ
Հառաչանքներն — «Ա՜խ, Թամա՜ր.. »:

Մոտ է ձայնը. խոլ խավարում,
Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խըլացած,
Ու մերթ լըսվում ուժասպառ,
«Ա՜խ, Թամա՜ր...»:

* * *

Առավոտյան ծովը ծփաց,
Ափը ձգեց մի դիակ,
Նրա շուրթին, պաղ, կարկամած,
Ասես մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ.
«Ա՜խ, Թամա՜ր...»:

Այն օրվանից նրա համար
Կղզին կոչվեց Ախթամար:



Խմբագիր՝ Ռ. Քալաշյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Բաղդասարյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Սահակյան
Վերստուգող սրբագրիչ՝ Բ. Քացախյան

Պատվեր 1349 Տիրաժ 25000

Հանձնված է արտադրության՝ 15|IV 1958 թ.։
Ստորագրված է տպագրության՝ 27|II 1959 թ.։
Թուղթ՝ $60 \times 92^{1}/_{8}$, տպագր. 1,5 մամուլ, հրատ. 2,0 մամուլ։
Գինը՝ 4 ռ.

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։